ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր., Կառավարական տուն 3

"20" .....11..... 2017 թ. N 02/24/7479-17

Ինֆորմացիայի ազատության
կենտրոն ՀԿ-ի նախագահ
Լ.Դոյդոյանին

Ի պատասխան Ձեր 15.11.2017թ.
թիվ 322-ի 2 հարցման

Հարգելի տիկին Դոյդոյան

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը հայտնում է, որ 2017 թվականի նոյեմբերի 17-ի դրությամբ ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին կազմակերպություններին դրամաշնորհային միջոցներ չի հատկացրել և դրամաշնորհային ծրագրերի վերաբերյալ հաշվետվությունների հիպերհղումներ չկան:

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը ՀՀ 2017 թվականի նոյեմբերի 17-ի դրությամբ, պետական բյուջեի միջոցների հաշվին՝ որպես նվիրաբերություն հատկացրել է՝

1. «Հայաստանի համայնքների միություն» իրավաբանական անձանց միությանը 10270,6 հազար դրամ՝ Երևանում կազմակերպված Հայ-ֆրանսիական ապակենտրոնացված համագործակցության 3-րդ համաժողովի ծախսերի մարման նպատակով, համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մարտի 23-ի N 292-Ն որոշման,

2. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին 1087821,2 հազար դրամ՝ Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքում առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծման ուղղությամբ իրականացվելիք աշխատանքների համար, համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 3-ի N 912-Ն որոշման,

3. «Երևան» հիմնադրամին 20000,0 հազար դրամ՝ Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի «Նորաշեն» 16-րդ թաղամասի 5 բարձրահարկ բազմաբնակարան բնակելի շենքերի գազաֆիկացման աշխատանքներին աջակցելու նպատակով, համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի սեպտեմբերի 28-ի N 1222-Ն որոշման:

Հարգանքով՝

Մ.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ

Կատարող՝ Դ.Նավոյան
Ֆինանսատնտեսագիտական
և տեղական բյուջեների վարչություն
Հեռ.՝ 511 321